ԱՆՑՅԱԼԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԷՋԵՐԻՑ

ԱՆՁԵՎԱՑՅԱՑ ԽՈՍՐՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԸՍՏ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԺԱՄԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԻ ՔԱՐՈԶՆԵՐԻ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՐՈԶ ԳԻՇԵՐԱՀՍԿՄԱՆ

ՔՆԻ ՀԱՆԳՍՏԻՑ ԲՈԼՈՐ ԱՐԹՆԱՑԱԾՆԵՐՍ, ՈՐԸ ՇՆՈՐՀԵՑ ՄԵԶ ՄԱՐԴԱՍԵՐՆ ԱՍՏՎԱԾ, Ի ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ Ի ՍՓՈՓԱՆՔ ՄԵՐ ՏԿԱՐՈՒԹՅԱՆ

Երանելի Խոսրովի մեկնությունը

Խոսքերի սկիզբը ցույց է տալիս Աստծու խնամքը, որ նախքան հանդերձյալ կյանքը այստեղ հանգիստ պարգևեց հոգևություններից, հոգսերից, մեղքերից, և զանազան տրտմություններից՝ գիշերով և քնով: Քանզի, թեև սրանք պարտավորվեցինք կատարել հանցանքի պատճառով, սակայն մարդասեր Աստծու գութը չհանդուրժեց մեզ միշտ այսպիսի դժվարությունների մեջ թողնել, այլ մեր կյանքը բաժանեց և մի մասը տրամադրեց հանգստի համար՝ ոչ թե ըստ արժանիքների, այլ շնորհով՝ այսինքն հարկադրեց որպես անհատույց մարդասիրություն: Այդ պատճառով է ասում. ՈՐԸ ՇՆՈՐՀԵՑ ՄԵԶ ՄԱՐԴԱՍԵՐՆ ԱՍՏՎԱԾ, քանզի այս ոչ միայն [մարդու] կումքին վերապահեց, այլև ոգու թմրությամբ ծանրություն դրեց աչքերի և մարմնի վրա: Եվ այդ պատճառով կոչ է անում արթնանալ քնի ծանրությունից, քանզի քնով մենք մխիթարվում, ափոփվում և նորոգվում ենք հոգևությունից: Ասում է. ՇՆՈՐՀԵՑ ՄԵԶ ՄԱՐԴԱՍԵՐՆ ԱՍՏՎԱԾ Ի ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ Ի ՍՓՈՓԱՆՔ ՄԵՐ ՏԿԱՐՈՒԹՅԱՆ, ԵՎ ՄԻԱԲԱՆ ԵԿԱԾՆԵՐՍ:

Այստեղ ՄԻԱԲԱՆԸ կամ քարոզի[1] սկզբում ԲՈԼՈՐԸ ոչ թե անխորհրդաբար է ավելացնում, այլ որպեսզի ցույց տա, թե Աստծու պաշտամունքի համար ամենքի միաբանվելը դյուրահաշտ է դարձնում Աստծուն և զորավոր է մեզ համար, իսկ դևերի մարտն՝ անզոր:

[1] Տեքստում՝ կամ յառաջ ի Զարթուցեալսն թարգմանեցինք՝ քարոզի սկզբում:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳՈՎ ՄԵՐ ՏԵՐ ԵՎ ՓՐԿԻՉ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԱՆՎԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ.

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳ ասելով բացատրում է, թե «Սուրբ Հոգին օգնության և գործակցության է գալիս մեր տկարության պատճառով» [ՀՌՈՄ. Ը 26] ըստ Պողոսի և երգակից է լինում մտքով սրբվածներին և Աստծու փառաբանությանը ջանացողներին: ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ է կոչում, քանզի խոսքով ենք փառավորում Աստծու անկարոտ բնությունը: Իսկ ՏԵՐ ԵՎ ՓՐԿԻՉ ասելով ՏԵՐ՝ ստեղծելու պատճառով, նաև որ տիրում է մեզ, և Փրկիչ, որովհետև անձը փրկանք տալով Իր արյամբ փրկեց մեզ մեղքից և մահից ու վերացրեց մեզ վրա եղած անեծքը: Այս պատճառով նրան հաճախ երկուսից էլ անվանում ենք, որպեսզի արարչությունից և խնամակալությունից, և ինչով, որ մեզ հետ մտերմություն ցույց տվեց՝ գոհանանք Նրանից:

ԱՀՈՎ ԵՎ ԴՈՂՈՎ ԱՂՈԹՔԻ ԿԱՆԳՆԵՆՔ ՆՐԱ ԱՌԱՋ.

Մեզ հրամայում է հրեշտակների ահն ու դողն ունենալ, այս պատճառով ավելացնում է, թե ՆՐԱ ԱՌԱՋ: Քանզի ինչպես հրեշտակները [Նրա] փառքի տեսիլքից միշտ ահով են, նույնպես և մենք դեպի Աստված մտքերս բարձրացնելով և կանգնելով ահագին փառքի առաջ, դողով պաշտենք Նրան:

ԵՎ ԳՈՀԱՆԱՆՔ ՆՐԱՆԻՑ ԱՅՍ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԻՆ, ՆՐԱ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

Քանզի Դավիթն ասում է. «Գիշերն արթնանում էի Քեզնից գոհանալու, Քո դատաստանի և արդարության պատճառով» [ՍՂՄ. ՃԺԸ 62]: Նույնը մեզ հրամայում է կատարել նաև [քարոզը] և ցույց է տալիս [Նրա] դատաստանն ու արդարությունը, որ կատարեց մեզ հետ՝ ոչ ըստ արժանիքի, այլ ողորմելով:

ՈՐ ԸՆՏՐԵՑ ՄԵԶ ԻՐ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՄԲ.

Ասում է, ՈՂՈՐՄԵՑ, այդ իսկ պատճառով ԸՆՏՐԵՑ, քանզի իբրև խոտան էինք և Աստծո դիմացից ընկածներ, [բայց] Նրա ողորմությունը մեզ ընտրյալներ դարձրեց ըստ առաքելական խոսքի «Ընտրեմ մեզ Նրա միջոցով, [այսինքն Քրիստոսով] նախքան աշխարհի արարումը, [որպեսզի] սուրբ և անարատ լինենք Նրա առաջ» [ԵՓԵՍ. Ա 4]:

ԵՎ ՇՆՈՐՀԵՑ ՄԵԶ ՈՒՆԵՆԱԼ ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ,

որովհետև Նրանք փառաբանիչներ են երկնքում, ինչպես և ավելացնում է, թե ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ, [քանզի] մեզ պարգևեց երկրում լինել հրեշտակներ և փառաբանողներ Աստուծո: Այս պատճառով նույնին կցում է.

[ՈՐՊԵՍԶԻ] ՄԵՆՔ ԵՎՍ ԼԻՆԵՆՔ ԲՈԼՈՐԻ ՏԵՐ ԱՍՏԾՈՒ ՓԱՌԱԲԱՆՈՂՆԵՐԸ.

Ե՛վ ԱՍՏՎԱԾ, և՛ ՏԵՐ ԲՈԼՈՐԻ ասելով, մեր միտքը արթնացնում է ճանաչել, թե կարգված ենք փառավորելու երկնքի և երկրի, և բոլոր արարածների Ստեղծողին: Ապա նույնի մոտ դնում է:

ԻՍԿ ՄԵՆՔ ԱՅՍՈՒՀԵՏԵՎ ՍՐԲԵԼՈՎ ՄԵՐ ԱՆՁԵՐԸ.

Այսինքն, որովհետև մեզ երկրում հրեշտակներ դարձրեց, [ուրեմն] մենք պետք է ունենանք հրեշտակների սրբությունը: Բայց, եթե ինչ-որ սխալված լինենք ըստ մարդկային բնության, խոստովանությամբ և ապաշխարությամբ այն սրբելով մաքուրներ դառնանք, քանզի ասում է սրբել

ՄԵՂՔԻՑ ԵՎ ՉԱՐ ԳՈՐԾԵՐԻՑ.

Եվ որովհետև մարգարեն հրամայում է. «Գիշերը բարձրացնել մեր ձեռքերը դեպի սրբություն» [հմմտ. ՍՂՄ. ՃԼԳ 2], ըստ այսմ էլ քարոզը հրահանգում է նախ սրբել մեղքը և չար գործերը, ապա ձեռքերը բարձրացնել դեպի սրբություն՝

ԱՌԱՆՑ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՄՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՄԵՐ ՁԵՌՔԵՐԸ ԴԵՊԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ,

ավելացնելով մարգարեականին նաև առաքելական խրատը, թե «Առանց բարկության և երկմտության» [Ա ՏԻՄ. Բ 8], քանզի աղոթականին անհրաժեշտ է աներկմիտ հավատով և անբարկանալի մտքով աղոթել Աստծուն, որի համար և Տերն ասում է. «Թող քո պատարագը՝ աղոթքները և գնա նախ հաշտվիր քո եղբոր հետ և ապա ինձ հետ» [հմմտ. ՄՏԹ. Ե 24]: Այս պատճառով քարոզը հրամայում է նախ բարկությունը թողնել, ապա Աստծուց քավություն հայցել, ասելով.

ՀԱՎԱՏՔՈՎ ԽՆԴՐԵՆՔ ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ,

որպեսզի եղբայրների ներելով մեզ համար թողություն խնդրենք Աստծուց և հավատանք, որ կստանանք:

ԽՈՍՏՈՎԱՆԵԼՈՎ ԾԱԾԿԱԳԵՏ ԱՍՏԾՈՒՆ ՄԵՐ ՍՐՏԵՐԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ,

քանզի ասաց, նախ անձերը սրբել մեղքից: Այս օրինակը ցույց է տալիս, թե խոստովանելով և քավություն խնդրելով ենք սրբվում, որովհետև, եթե նույնիսկ չխոստովանենք, Ծածկագետից չենք կարող թաքցնել, այլ խոստովանելն ու հանցավորությունը հանձն առնելը մեզ մղում է խոնարհության ու ամոթի, զղջման ու պաղատանքի, որով Աստծուց ստանում ենք ողորմությունը, ներվելն ու արդարանալը: Քանզի մարգարեի միջոցով իսկ ասում է. «Նախ դու խոստովանիր քո անօրենությունները, որպեսզի խոստովանելով արդարանաս» [ԵՍ. ԽԳ 28]:

ՈՐՊԵՍԶԻ ԲՈԼՈՐ ՍՐԲԵՐԻ ԱՂՈԹՔՆԵՐՈՎ ԵՎ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՄԵՐ ՊԱՂԱՏԱՆՔՆԵՐԸ,

այսինքն, թե սրբերի բարեխոսությանը ապավինած, խոստովանությամբ խոնարհվելով և մեզ անարժան համարելով է պաղատանքն ընդունելի դառնում Աստծուն: Մանավանդ, եթե արթնանանք ոչ միայն քնից, այլև աշխարհի զբաղումներից և տեսակ-տեսակ ցնորքներից և արթուն հոգիներ ունենանք: Որը խնդրում ենք [սուրբերին] նախ մեզնից լսել և ապա ամենալուր Աստծուն լսելի դարձնել, որպեսզի փոխարենը

ՄԱՐԴԱՍԵՐՆ ԱՍՏՎԱԾ ՇՆՈՐՀԻ ՄԵՋ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՊՐԵԼ ԸՍՏ ԻՐ ԿԱՄՔԻ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՆԱՐԱՏ ՎԱՐՔՈՎ:

ՇՆՈՐՀԵԼԸ բացատրում է, որ Նրա պարգևները ձրի են, թեպետև շատերս ենք առաքինանում: Բայց, քանզի սիրում է մարդկանց, նաև առաքինությամբ ապրելն է շնորհ (առանց ոչ մի բիծ ունենալու և անարատ վարքով ապրելը), որ շնորհում է մարդասերն Աստված: Եվ առավել պատիվ է, քան արքայությունը, որին՝ [առաքինությանը] ընտրյալները ձգտում էին հույժ ցանկությամբ, քան երկնքի բարիքներին, որովհետև ոչ թե ցանկանում էին վարձ ստանալ Քրիստոսից, այլ ճգնել Քրիստոսի համար: Քանզի առ Քրիստոս ունեցած ջերմ սիրո պատճառով, նրանց բազմապատիկ ախորժելի էր չարչարվել Քրիստոսի համար, քան Քրիստոսի հետ փառքում լինել: Ինչպես և երանելի Հովհաննն* է ասում, թե «նախընտրում եմ Քրիստոսի հա-

* Խոսքը Հովհան Օձնեցի հայրապետի մասին է;

մար կապանքներում լինել, քան քերովբեների հետ Աստծուն մերձ լինել»: Իսկ երանելի Աստվածաբանը գրում է. «Որպեսզի չասեմ, թե նույնինքն տառապանքը վարձատրություն է, որ ամենևին մտքով առք ու վաճառք չէ»: Նաև այս պատճառով ընտրյալ Գրիգոր Նյուսացին Սողոմոնի «Երգ երգոց» եղող օրհնություններում ասում է. «Հարսին ունի ոչ որպես վարձատրություն, այլ առաքինանալը սիրելու պատճառով»: Իսկ արդարությունը ըստ Աստվածաբանի և Նյուսացու սահմանված է երեք մասերից. երկյուղի պատճառով, վարձատրության պատճառով, սիրո պատճառով: Նյուսացին սիրո գերակայությունը բացատրում է ամուսնական մերձավորության օրինակով, իսկ Աստվածաբանը՝ որդիության, ապրողների երեք կարգեր ընդունելով. ծառա է կոչում երկյուղով ուղղվածներին, վարձկան՝ ստանալու պատրաստակամներին, բայց առավել քան սրանք որդի է կոչում ոչ թե վարձկանին, այլ հոր կողմից հավանածին:

Արդ՝ առաջին մեծ պարգևն այս է. առաքինություն ստանալ, իսկ երկրորդը հավիտենական ուրախության արժանանալ, որը Քրիստոսին սիրողները կստանան Նրանից ըստ Նրա անսուտ խոստման: Այդ պատճառով, որպեսզի չերկբայանանք խոստումների [նկատմամբ], ճշմարտությունից է հաստարում այն՝ ՈՐԸ ԽՈՍՏԱՑԱՎ ասելով այսպես.

ՃՇՄԱՐԻՏՆ ԱՍՏՎԱԾ ՏԵՐ ՄԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ԱՊՐԵՑՐՈՒ ԵՎ ՈՂՈՐՄԻՐ ՄԵԶ

խնդրվածքով ավարտում է խոսքը և հիշատակում Տնօրինական անունները, որ մեզ համար ծնվեց և «Կոչվեց Հիսուս, որ է Փրկիչ» [հմմտ. ՄՏԹ. Ա 21, ՂՈՒԿ. Ա 31], քանզի մեզ փրկեց մոլորությունից և սատանայական գործերից և՛ մեղքից, և՛ անեծքից, և մահից, և՛ ապականությունից, և՛ դժոխքից: Իսկ Քրիստոս անվանվեց, քանզի օծվեց Հոգով. «Կոչվում է Քրիստոս, այսինքն Օծյալ» [հմմտ. ՂՈՒԿ. Բ 11], և նույն Հոգով «օծեց նաև մեզ» [հմմտ. Բ ԿՈՐՆԹ. Ա 21] ու օծյալներ դարձրեց և քրիստոնյաներ անվանեց:

ՏԵՐ ՄԵՐ ԵՎ ԱՍՏՎԱԾ՝ ընդհանուրի Տիրոջը պարգևում է մեր սեփականը լինել: Այս պատճառով է այնտեղ ավելացնում ՄԵՐԸ, որովհետև այսպիսով Նրան առավել գթության ենք մղում՝ ողորմելու և ապրեցնելու, ասելով.

ՏԵՐ ՄԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ԱՊՐԵՑՐՈՒ ԵՎ ՈՂՈՐՄԻՐ:

Նույնը և ժողովուրդն է ասում. ԱՊՐԵՑՐՈՒ, ՏԵՐ, քանզի թաղված էինք մեր մեղքերում և Քրիստոս կամենալով ապրեցնել աշխարհ եկավ և ասաց. «Եկա փրկելու և ոչ կորստյան մատնելու» (հմմտ. ՂՈՒԿ. Թ 56): Եվ որովհետև կորստյան էինք արժանի և ոչ կյանքի, բայց Նա ողորմելով փրկեց, այդ պատճառով քարոզն ասում է. ԱՊՐԵՑՐՈՒ ԵՎ ՈՂՈՐՄԻՐ՝ այսինքն, թեև անարժան ենք կյանքի, [սակայն] ողորմությամբ ապրեցրու, քանզի ողորմելը չի թողնում արժանավորին խնդրել, այլ հարկադրում է անարժաններին ևս ապրեցնել:

ՀԱՎԱՏՔՈՎ ԽՆԴՐԵՆՔ ՏԻՐՈՋԻՑ ԱՅՍ ԳԻՇԵՐՎԱ ՄՆԱՑՈՐԴԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵԼ.

Հանապազ պարտավորվում ենք աղոթել խաղաղության համար, ոչ միայն մարմնի, այլև հոգու և մտքի խաղաղություն հայցել, որից և մեծ օգտակարություն, լուսավորություն և հստակություն է լինում առ Աստված աղոթքներում: Իսկ ժողովուրդը միաբան ասում է ոչ թե տո՛ւր, այլ ՇՆՈՐ-

ՀԻՐ, ՏԵՐ՝ ամենուր խնդրելով՝ ողորմելով շնորհել, և ոչ թե մաղթում՝ գթությամբ արժանին տալ:

ՏԻՐՈՋԻՑ ԽՆԴՐԵՆՔ ՄԵՐ ԱՆՁԵՐԻ ՊԱՀԱՊԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ,

քանզի, «հրեշտակներ կան, որոնք պատժելու համար են առաքվում,— ասում է երանելի Հովհանը,—և [հրեշտակներ] կան, որ պարգևների և խաղաղության արբանյակներ են», որոնց հայցում ենք առաքել մեր պահպանության ու փրկության համար և զորհանապազ մեզ հետ լինել:

ՏԻՐՈՋԻՑ ԽՆԴՐԵՆՔ ՄԵՂՔԵՐԻ ՔԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ,

քանզի հույժ անհրաժեշտ է ամեն ժամ մտածել, որ մեղավոր ենք Արարչի հանդեպ և ապերախտներ եղանք երախտավորի մոտ: Բայց առավել կարևոր է այս միաբանված կատարել և միմյանցով միմյանց համար պաղատել և իրար վրայից թեթևացնել մեղքերի բեռը: Քանզի մեր միաբանությամբ և՛ հրեշտակները, և՛ սրբերը կցորդակից են լինում մեր աղերսներին, իսկ Աստված առավել է խոնարհվում [դեպի] միաբանված խնդրանքները և հաշտվում, ինչպես և նինվեացիների միաբանվածներին քավություն տրվեց և հեռացրեց սպառնացած պատուհասը (տե՛ս ՀՈՎՆԱՆ Գ):

ՏԻՐՈՋԻՑ ԽՆԴՐԵՆՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ Ի ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԱՆՁԵՐԻ, որը Աստծու գթությունը մեծ պահապան պարգևեց մեզ, Իր անչափ արյամբ որպես սրված սուր, պատրաստ զենք տվեց մեր ձեռքը ընդդեմ մեզ հակառակ անմարմին թշնամիների, նաև անմատչելի պարիսպ և վահան մարմնավոր հակառակորդներից՝ միայն, եթե դրոշմենք մեզ աներկբա և անպղտոր հոգով և բոլոր երևելի ու աներևույթ պատերազմները կհեռանան մեզանից: Միայն, եթե մեզ կնքելիս հիշենք մեր Տիրոջ մարդասիրությունը, որ Աստծո Որդի լինելով, սուրբ, անմեղ, անարատ, զատված մեղավորներից, մեզ՝ մեղավորներիս համար, Իր մարմնով խաչի չարչարանքը կրեց: Նրան երկաթներով ամրացնելով և ցավերի սաստիկ կսկիծով մեր հանցանքների հատուցումը Նրանից պահանջվեց: Եվ խաչով քանդելով անեծքի և մեղքի դատակնիքը մեզ ազատներ, անսպիներ, անմահներ և անապականներ դարձրեց՝ Ինքը նրա վրա և՛ Քահանայապետ, և՛ զոհ լինելով: Եվ Իր արյամբ անմատույց երկինքների երկնքում մտնելով սրբությունների մեջ, հաշտեցնելով Հորը մեզ հետ, Իր մարմնով մեզ դեմհանդիման կանգնեցրեց: Աստծո դիմացից դատապարտությամբ ընկածներիս, Աստծո որդիների մեջ կարգեց՝ Ինքը մարմնով խաչի վրա հաղթական բարձրանալով Հորից անբաժանելի մնալով Աստվածությամբ: Այդ պատճառով մեզ վրա խաչի նշանը դնելով հավատանք նույնինքն Աստծո Որդուն աստվածային արյամբ մեզ վրա կրելուն [մեր] դեմքին դրոշմելուն, գլուխները պսակելուն, անձերը պարսպելուն և հոգիների գրկում մեր հոգիների փրկությունը ընդխառնելուն: Եվ ապավինելով սուրբ Նշանին աներկյուղ լինել չարից, ըստ մարգարեի. «Չեմ երկնչի չարից, քանզի, Տե՛ր, Դու ինձ հետ ես, Քո ցուպն ու գավազանը նրանք պիտի մխիթարեն ինձ» [ՍՂՄ. ԻԲ 4, 5]: Արդ՝ այն հանապազ խնդրենք մեզ ի պահպանություն և նույնով միշտ պարծենանք և քարոզից այս լսելով, [խաչը] հավատքով պատկերենք մեր սրտերում և դեմքերին, իսկ Աստծուն սրտմտանքով ասենք. ՇՆՈՐՀԻՐ, ՏԵՐ, որը և քարոզի յուրաքանչյուր տներին սովոր ենք ասել և սրանով ավարտել: Ապա քարոզում է.

ԵՎ ԴԱՐՁՅԱԼ ՏԻՐՈՋԸ ԱՂԱՉԵՆՔ ՄԵՐ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՈՒ ՍՈՒՐԲ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ, որը մեծ խնդրանք է և կարևոր բոլորի համար՝ ճշմարիտ հավատքից հեռացածների և հերձվածներում մոլորվածների [համար] դարձ խնդրել և միաբանություն՝ ճշմարիտ հավատքում և «միաբանված ճշմարտության մեջ հաստատվել» (Բ ՀՈՎՀ. Ա 2), որի համար և Տերը ողորմեց բոլոր օրհնողներին, որովհետև պիտի ողորմի և գթության դառնալով խնամարկի Իր արարածներին, ինչպես նաև Իր արյան գնով գթալով չի թողնելու իսպառ կորչել:

ՄԵՐ ԵՎ ՄԻՄՅԱՆՑ ԱՆՁԵՐԸ ՀԱՆՁՆԵՆՔ ԱՄԵՆԱԿԱԼ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ.

Մեր և բոլոր հավատացյալների հոգիները, մանավանդ նրանցը, որոնք մեզանից աղոթք հայցեցին, պարտավոր ենք հանձնել Աստծուն, քանզի և այս իսկ սովոր ենք պատասխանել նրանց, թե Աստծուն հանձնեք: Այդ պատճառով և նախկինում այլ քարոզ չէին խոսում նրանց համար, որովհետև բավարարվում էին սրանով: Իսկ ԱՄԵՆԱԿԱԼԸ այստեղ ոչ թե անխորհրդաբար է ավելացնում, այլ որպեսզի մտածենք, թե բոլորի Տերը նույնն է և հաստ բոլորին, նաև ամենքին Իր իշխանության տակ ունի, քանզի այս է Ամենակալը: Ապա նույն ինքը ժողովուրդը, դեպի Աստված խոսքը ուղղելով միաբան ասում է.

ՔԵԶ՝ ՏԻՐՈՋԴ ԹՈՂ ՀԱՆՁՆՎԵՆՔ:

Նույն [մտքին] է հանգեցնում նաև քարոզն ավարտին.

ՈՂՈՐՄԻՐ ՄԵԶ, ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ՄԵՐ, ԸՍՏ ՔՈ ՄԵԾ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ, բայց ոչ որքան մենք ենք խնդրում և ճանաչում, այլ որքան մեծ է Քո բնության ողորմությունը, քանզի ինչպես Աստված՝ Ինքն է անսահման, այդպես և [Իր] ողորմությունը: Ողորմություն ըստ մեզ ասվում է արտում նեղությունների, վշտերի և վարանումների մեջ որևէ մեկին ցավակցելը և ըստ կարողության վտանգվածին թեթևացնելը: Թեպետև պարտավոր չենք, բայց արտի ճմլումը որպես պարտավորվածի մեզ մղում է կարեկցության: Այս նաև մենք ենք Աստծուց աղաչում, թեև այլ դեմքով ասում ենք արժանի չենք Քո պարգևներին, քանզի ընկանք փառքից, որ տրվեց Քեզանից, և վտարվեցինք դրախտից, նաև մահվամբ ու ապականությամբ դատապարտվեցինք ու խորովվում ենք և՛ հոգսերի, և՛ տրտմությունների, և՛ հոգնությունների, և՛ տեսակ-տեսակ ցավերի, և՛ տառապանքների, և՛ տարակուսանքների մեջ՝ զրկված Քո սուրբ տեսությունից: Իսկ բանսարկուին անհաշտ պատերազմող ունենք, նաև որոգայթադիր ու մեղսածու զանազան ախտերով, և եղկելիներ ենք ըստ հոգու, ըստ մարմնի և ըստ մտքի, քանզի նույնիսկ [մեր] բնությունը մեզ հակառակ կարգվեց: Այսպիսի աղետներին նայելով Դո՛ւ, Ամենողորմ Տեր, և Քո մեծ ողորմությամբ, մեզ ամենքից ողորմելի համարելով, ողորմես մեզ Քո անչափ ողորմությամբ: Այս ողորմագին պաղատանքի ձայնին ժողովուրդը նաև միաձայնում է հայցվածներին առհասարակ ասելով. ՈՂՈՐՄԻՐ, ՏԵՐ:

(շարունակելի)

Պատրաստեց՝ ՎԱՉԳԵՆ ՍՐԿ. ԳԱԼՍՏՅԱՆ